

ՀՐ-96

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՐՕՂՈՒ ԱՐՄԱԿԵՆԻ ԱՐՄԵՆԱԿԻ

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ
(1923-1939 թթ.)

Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2011

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից
անդամ Խառատյան Ա. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ. Կոստանյան Է. Ա.
բ. գ. թ., դոցենտ Մելքոնյան Ռ. Հ.


Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. հուլիսի 8-ին, ժամը 14⁰⁰-ին
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՎ-ի 004 մասնագի-
տական խորհուրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Սարշալ Բաղրամյան
24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. հունիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

 Հ. Ղ. Սուրբաթյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

Բիզանդական Կայսրության հնաուրց մայրաքաղաքը՝ Կոստանդինապոլիս
կամ նախկին անունով Բիզանդիոն կամ Պիզանս հիմնուած է Ն. ք. 658 թուին Սէ-
կարիացի Պիզասի կողմէ¹: Իսթամպուլ կամ Իսթամպուլ տիտղոսը՝ զոր
Թուրքերը կ'որդեգրեն Բիզանդիոնի փոխարէն, աղաւաղումն է յունարէն Իսթանպուլին²:

Իսկ Հայ ժողովուրդի Բիզանդիոնի հետ դարաւոր կապը կը սկսի Հայ
հողին վրայ 384 թուականէն յետոյ, երբ Հայ ժողովուրդի երկու դրացիները՝ Բի-
զանդական կայսրութիւնն ու Պարսկաստանը, իրենց միջեւ կը բաժնեն Հայաս-
տանը:

Ստամպուլի Հայ համայնքի ազգային կեանքի ու իրականութեան ուսում-
նասիրութիւնը, Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումէն մինչեւ 1939 թուականը
(Բ. Համաշխարհային պատերազմ), արդիական նշանակութիւն ունի տոյն համայն-
քի պատմութեան բացայայտման համար: Այսօր, երբ շատ աւելի լայն շփումներ
եւ փոխադարձ կապեր կը հաստատուին Հայրենիքի եւ Սփիւքքի հանրութիւննե-
րու միջեւ, մասնաւորաբար համազգային եւ մշակութային ձեռնարկներու արդիւն-
քով, կարելոյ նշանակութիւն կ'ունենայ արեւմտահայ երբեմնի մեծագոյն գաղթ-
ճախի հայութեան ազգային, իրաւական, տնտեսական եւ մշակութային կեանքին
գիտական եւ գործնական կերպով ծանօթանալը: Ստամպուլի Հայ համայնքը,
Թուրքիոյ Հանրապետութեան քաղաքական ու տնտեսական իրականութեան
հետ կապուած կ'ապրի թէ՛ երկրի ազգային փոքրամասնութեանց յատուկ եւ թէ՛
իրեն իւրայատուկ զարգացումներ: Ուստի, անոր ազգային դիմագծի պահպա-
նութիւնն ու յարատեւումը կ'ընթանայ Քէմալական Թուրքիոյ փոքրամասնութիւն-
ներու նկատմամբ վարած թրքացման քաղաքականութեան դէմ ջանք գործադրե-
լով՝ հայ համայնքի մշակութային, բարեգործական ու կրթական հաստատութիւն-
ներուն պահպանման ու զարգացման համար:

Ուսումնասիրուող թեման որոշ չափով կը բնութագրէ Ստամպուլահայ
համայնքի հասարակական կացութիւնը, անոր Քէմալական պետութեան հետ
ունեցած իրաւական փոխարաբերութիւններուն տեսանկիւնէն: Ստամպուլահայ
հանրութեան համար կարեւորագոյն նշանակութիւն կ'ունենայ, եւ այսօր եւս ունի,
իր ազգային սեփականութիւններուն պահպանումն ու անոր կապուած խնդիրնե-
րը: Այս շրջանակի մէջ շատ կարելոյ նշանակութիւն ունի ազգային եկեղեցին,
տուեալ պարագային Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը, որն իր շուրջ համա-
խմբելով հայ հանրութիւնը հանդէս կուգայ որպէս միջնորդ համայնքի ու պետու-
թեան միջեւ: Ուրեմն՝ նոյնպէս արդիական ու ճանաչողական լուրջ նշանակութիւն
ունի Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի ձեռնարկութիւնները, համայնքի գոյա-
տեւման համար անոր նշանակութեան եւ կարեւորութեան բացայայտումը, որ
ցայսօր միայն հպանցիկ ներկայացուած է: Այս կապակցութեամբ Ստամպուլահայ
համայնքի քաղաքացիական կացութիւնը հաւանաբար պէտք է դիտարկել իր
ուշագրաւ կարգավիճակի մէջ, թէ՛ որպէս Թուրքիայի քաղաքացիներու հաւաքա-

¹ Տրք. Գ. Գ., Պատմութեան համար ակնարկ մը Իսթանպուլի եւ Սամաթիոյ թաղի նախկին
շրջաններուն, Իսթանպուլ, 1957, էջ 8:

² Սիրունի 3., Պոլիս եւ իր դերը, Ա հատոր, Պէյրութ, 1965, էջ 99:

կանութիւն եւ թէ՛ որպէս իր ինքնավարութեան յատկանիշներով՝ ազգային, հոգեւոր, կրթական եւ այլ յատկութիւններով պետութեան կողմէ ընդունուած կրօնա-մշակութային փոքրամասնութիւն:

Արդիական ու ճանաչողական լուրջ նշանակութիւն ունի նաեւ Ստամպուլի հայերու եկեղեցական կանոնագրութեան արդի վիճակը, որն ծնուով մը շարունակութիւնը կ'ըլլայ արեւմտահայերու 1863 թուականի Ազգային Սահմանադրութեան մինչեւ 1934 թուականը, երբ Երկրի քաղաքային վիճակի բերմամբ կը ջնջուի Ազգային Սահմանադրութեան վերջին մնացորդները եւ հայ համայնքը բարոյական ու կրօնական կապը պահելով հանդերձ Պատրիարքարանին հետ, ըստ 5404 համար օրէնքի տրամադրութիւններուն, մատակարարական տեսակէտէ կ'ենթարկուի Վազֆներու վարչութեան հակակշռին, որմէ յետոյ համայնքը ցայսօր չունենար ներքին կանոնագրութիւն մը եւ որուն հետեւանքով ան այսօր կը յայտնուի բարդ ու գուցէ պառակտուած վիճակի մը մէջ՝ Պատրիարքական ընտրութեան առթիւ:

Վերոյիշեալ պարագաներով պայմանաւորուած է, Հայ ժողովուրդի արեւմտեան հատուածի խարխիւլը հանդիսացող Ստամպուլի Հայ Գաղթօձախի 1923-1939 թուականներու ուսումնասիրութեան կարեւորութիւնն ու արդիականութիւնը:

ԱՍՏԵՆԱԽՍՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ, Ատենախօսութեան նպատակն է գրապահոցներու արխիւային նիւթերու եւ վաւերագրերու, Թուրքիայէն դուրս հրատարակուող արտասահմանեան մամուլի նիւթերու եւ համապատասխան գրականութեան հիման վրայ ներկայացնել՝ Ստամպուլի համայնքի 1923-1939 թթ. ազգային, մշակութային ու տնտեսական կեանքը, որն իրականացնելու համար մեր առջեւ դրած ենք հետեւեալ խնդիրները.

- Անդրադառնալ Կ.Պոլսոյ Պատրիարքութեան ու համայնքի անցեալին՝ Կ.Պոլսոյ գրաւումէն մինչեւ Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումը:

- Ներկայացնել ու բացայայտել ազգային փոքրամասնութիւններու, անոնց կարգին եւ հայ հանրութեան նկատմամբ Թուրքիոյ Քէմալական Հանրապետութեան վարած քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ այդ փոքրամասնութիւններու սոյն քաղաքականութեան հետեւանքով յառաջացած իրաւական կացութիւնը 1923-1939 թթ.:

- Ստամպուլի հայութեան եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ազգային ու քաղաքական կացութիւնը, Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումէն յետոյ:

- Բացայայտել Ստամպուլի հայերու տնտեսական կեանքը: Բացայայտել նաեւ Հայոց Լքեալ գոյքերու կնճիռը: Ներկայացնել Սանասարեան Խանն ու Բանկալիքի Հայոց Գերեզմանատունը՝ որպէս Լքեալ գոյքեր:

- Ներկայացնել Հայ վազֆներն ու ազգապատկան կալուածները: Վազֆներու օրէնքն ու անոր բնութագիրը իբրեւ գործօն՝ ազգային հաստատութիւններու պահպանման:

- Բնութագրել Ստամպուլի համայնքային հաստատութիւններու նշանակութիւնը համայնքային կեանքի մէջ, անոր աւանդական ու բարեգործական հիմնարկները Ազգային Խնամատարութիւնը, Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը, Որբանոցները, եկեղեցիներն ու գերեզմանատուները ինչպէս նաեւ անոնց մատակարարման միջոցները:

- Ներկայացնել Ստամպուլի հայ կրթական կեանքը խնդրոյ առարկայ ժամանակաշրջանին ու անոր նշանակութիւնը հետագայ տասնամեակներու հայ հանրութեան համար:

- Բնութագրել Ստամպուլի հայ մշակութային ընկերութիւնները եւ անոնց գործունէութեան շրջանակները:

- Ներկայացնել Ստամպուլի հայութեան նշուած ժամանակաշրջանի մշակութային կեանքը՝ գրականութիւնը, գրատպութիւնը, մամուլը, թատրոնն ու երաժշտութիւնը, ինչպէս նաեւ անոնց նշանակութիւնը ազգապահպանման գործին մէջ:

ԱՍՏԵՆԱԽՍՈՒԹԵԱՆ ՄԵԹՈՏԱԲԱՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, Ատենախօսութիւնը շարադրուած է չիրապարակուած եւ իրապարակուած հայ եւ օտարալեզու արխիւային նիւթերու, վաւերագրերու, մամուլի իրապարակումներու ինչպէս նաեւ համապատասխան գրականութեան տուեալներու պատմահամեմատական ուսումնասիրութեան մէթոտով: Խնդրոյ առարկայ հիմնահարցերը վերլուծութեան ենթարկուած են փաստագրական ու վիճակագրական տուեալներու համադրմամբ եւ վերլուծութեամբ, հիմք ընդունելով անաչառութիւնն ու անկողմնակալութիւնը:

ԱՍՏԵՆԱԽՍՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, Ուսումնասիրութիւնը կ'ընդգրկէ 1923-1939 թթ. միջեւ մնացած ժամանակահատուածը, երբ կը բացուի Ստամպուլի համայնքի պատմութեան մէջ նոր փուլ մը՝ Օսմանեան կայսրութեան փլուզումէն յետոյ հռչակուած Թուրքիոյ Հանրապետութեան առաջին տասնամեակներուն, մինչեւ Բ. Համաշխարհային պատերազմ: Այս փուլը կը բնորոշուի Ստամպուլի հայերու հասարակական ու տնտեսական ինչպէս նաեւ ազգային կացութեան կտրուկ փոփոխութեամբ, իբրեւ հետեւանք Թուրքիոյ քաղաքական նոր կարգերու ու քաղաքացիական նոր իրաւայարաբերութիւններու հաստատման: Քէմալական Թուրքիոյ վարած քաղաքականութեան պատճառաւ Երկրի մէջ կը փոխուին ազգային փոքրամասնութիւններու կարգավիճակն ու տեղը, սկզբունքային փոփոխութիւններ կը կրեն Հայ համայնքի պետութեան հետ իր ունեցած փոխարաբերութիւնները, գոյքային սեփականատիրական իրաւունքները եւ առհասարակ քաղաքացիական իրաւունքներն ու պարտականութիւնները: Փոփոխութիւններ կը կրեն նաեւ Ստամպուլի հայերու մշակութային ինքնավարութիւնը, մասնաւորաբար եկեղեցին իր կացութեամբ, ի դէմս Պատրիարքութեան, ինչպէս նաեւ անոր կապուած ազգային հաստատութիւնները:

ԱՍՏԵՆԱԽՍՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՎՈՒԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ, Այս ատենախօսութեամբ առաջին անգամն է, որ գիտական ուսումնասիրութեան առարկայ կը դառնայ Ստամպուլի համայնքի 1923-1939 թթ. պատմութիւնը: Ատենախօսութիւնը կը բովանդակէ Պոլսահայ պատմութեան այն իւրայատուկ եւ դժուար ժամանակահատուածներէն մէկը, երբ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն ու ազգային վարչութիւնները երբեմն օրինական, իսկ աւելի յաճախ՝ անօրէն պարտադրուածութեամբ կը համակերպին՝ կարգադրութիւններու, որոնց ժխտական ազդեցութիւնը այսօր եւս զգալի է համայնքային կեանքին ներս: Ուստի, նորոյթ պէտք է համարել Հանրապետական Թուրքիոյ գրեթէ առաջին երկու տասնամեակներու ընթացքին համայնքի՝ Պատրիարքութեան եւ ազգային հաստատութիւններու ազգապահպանման ուղղուած ջանքերուն բնութագիրն ու գնահատականը: Նորոյթ է նոյնպէս Ստամպուլի համայնքի տնտեսական

կանքի եւ Հայոց լքեալ գոյքերու արդիական վերլուծութիւնն ու նկարագիրը, ինչպէս եւ այն, որ համայնքի ազգային-հոգեւոր, մշակութային ու տնտեսական կացութեանը վերաբերող հիմնական հարցերը կը հետազօտուին ոչ թէ մեկուսի, այլ իրենց ներքին միասնութեան մէջ, թուրքիոյ հասարակական եւ տնտեսական իրականութեան ընդհանուր հիմքի վրայ:

Ուսումնասիրութեան նորոյթային այս արժէքը հնարաւորութիւն կ'ընձեռէ պատկերացնել Ստամպուլի համայնքի տեղն ու մշակութիւնը՝ թուրքիոյ Հանրապետութեան 1920-1930-ական թթ. հայկական Սփիւռքի բարդ ու հակասական պատմութեան մէջ:

Ատենախօսութեան, անոր հիմնահարցերու համադրումէն ու վերլուծութենէն բխող դրոյթները կարելի է օգտագործել՝ Սփիւռքի պատմութեան վերաբերեալ բուհական դասախօսութիւններու, ինչպէս նաեւ նոյն բովանդակութեամբ մշակուելիք դասընթացքներու մէջ: Ան իր պարունակած հարուստ տեղեկութիւններով ու փաստերով կարող է անմիջական նպաստը բերել Հայաստան-Սփիւռք փոխյարաբերութիւններու գործնական իրականացման եւ այս իմաստով մասնատրաբար Հայաստանի նորահաստատ Սփիւռքի Նախարարութեան, ինչպէս նաեւ Արտաքին գործոց Նախարարութեան գործունէութիւններուն:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ. Ատենախօսութիւնը քննարկուած եւ հրապարակային պաշտպանութեան երաշխաւորուած է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Հայ Գաղթավայրերի եւ Սփյուռքի Պատմութեան բաժնի կողմէ: Ուսումնասիրութեան հիմնական խնդիրները լուսաբանուած են հեղինակի հրատարակուած 4 յօդուածներուն մէջ:

ԹԵՄԱՅԻ ՌԵՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԱՍՏԻՃԱՆԸ, ՍԿՉԲՆԱԳՐԲԻՐՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ պատմագիտութեան մէջ գոյութիւն չունին Ստամպուլի Հայ Համայնքի 1923-1939 թթ. պատմութեան նուիրուած գիտական ուսումնասիրութիւններ: Սակայն սոյն նիւթի առանձին հարցերուն իրենց աշխատութիւններուն մէջ առաւել կամ նուազ ծաւալով անդրադարձած են հայ եւ օտար պատմաբաններ եւ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններու հեղինակներ:

Ատենախօսութիւնը շարադրելու համար հետազօտուած են արխիւային նիւթեր, որոնք հաւաքուած են ՀՀ Ազգային Արխիւի ֆոնտերէն³, Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի⁴ եւ Ե. Չարենցի անուան գրականութեան ու արուեստի թանգարանի արխիւներու ֆոնտերէն⁵, Գարակէօզեան Ազգ. Որբանոցի⁶ եւ

³ Հայաստանի Ազգային Արխիւ (այսուհետև՝ ՀԱԱ), Ֆոնտ 409, ցուցակ 1, գործ 3928, էջ՝ 25:

ՀԱԱ, Ֆոնտ 409, ցուցակ 1, գործ 3928, էջ 24-25: ՀԱԱ, Ֆոնտ 193, ցուցակ 1, գործ 351, էջ 2:

⁴ ՀՀ Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի Արխիւ, Թղթապանակ 6 – 12/40:

⁵ ՀՀ Ե. Չարենցի անուան գրականութեան ու արուեստի թանգարանի արխիւ, Գէորգ Բամպուքճեանի ֆոնտ (47), Յուշամատեան 3. Կոլտ Պատրիարքի ծննդեան 300 ամեակին առթիւ, էջ 6:

⁶ Գարակէօզեան Ազգային Որբանոցի անմշակ արխիւ Կրթական տնօրէնութեան 5 Յունիս 1934 թ. եւ 5059/2223 համար հրահանգը (Յաւելուած 4): Կրթական տնօրէնութեան 25 սեպտեմբեր 1936 թ. եւ 67160/2780 թիւ գրութիւնը (Յաւելուած 5):

Արաս Հրատարակչատան անմշակ արխիւներէն⁷, ինչպէս նաեւ փաստաթուղթեր օտար պետական⁸ ու անհատական⁹ արխիւներէն:

Պատմաճանաչողական մեծ արժէք կը ներկայացնէ Ե. Չ. Քէօմիւրճեանի տեղագրական բնոյթ ունեցող «Ստամպուլայ Պատմութիւն» երկը¹⁰:

Յիշատակութեան արժանի է Մ. Օրմանեանի¹¹ «Ազգապատումի» Բ. Հատորը, ուր հեղինակը կուտայ Կ. Պոլսոյ գաղթօձախի պատմագրութիւնը:

Մեծ արժէք կը ներկայացնէ Հ. Պէրպէրեանի¹² աշխատութիւնը, ուր հեղինակը հարուստ տեղեկութիւններ կուտայ Կ. Պոլսոյ Հայ Պատմութեան համար:

Արժէքաւոր են Ա. Ալպօյաճեանի¹³ Պալաթ թաղի կազմութեան եւ Պ.Կարապետեանի¹⁴ Սամաթիայի Ս. Գէորգ Եկեղեցւոյ ձօնուած յիշատակարանները:

Առանձնակի արժէք կը ներկայացնէ Հ. Ս. Անասեանի¹⁵ գիրքը, ուր հրատարակուած են Բիւզանդիոնի անկմանը նուիրուած Ա. Անկիրացիի, Ա. Բաղիշեցիի ինչպէս նաեւ Ե. Չ. Քէօմիւրճեանի երկերը:

Ուսումնասիրութեան համար կարելու է նիւթեր կը պարունակեն 3. Ճուլլեան Սիրունիի Կ. Պոլսոյ գաղթավայրի պատմագրութեան նուիրուած չորս հատորանոց ծաւալուն մենագրութիւնները¹⁶:

Ուշադրութեան արժանի են Լ. Գոյումճեանի ուսումնասիրութիւնները¹⁷, որոնք կը լուսաբանեն հանրապետական շրջանի օրէնսդրական կացութիւնը:

Առանձնակի արժէք կը ներկայացնէ Ա. Խառատեանի Կ. Պոլսոյ ԺԵ.-ԺԷ. դդ., նիւթերով հարուստ, հանգամանակից աշխատութիւնը¹⁸, ուր հեղինակը կը միանայ Հ. Պէրպէրեանի տեսութեան, թէ ԺԵ. դարու ձեռագրերու եւ յիշատակարաններու մէջ Կ. Պոլսոյ հայերու հոգեւոր պետը ընդհանրապէս կը յիշատակուի «հայրապետ», «եպիսկոպոս» եւ «արհիեպիսկոպոս» յորջորջումներով եւ ոչ «պատրիարք»:

⁷ Այլազ 3., Վերջիշումներ եւ բեմընկերներու, Արաս Հրատարակչութեան անմշակ արխիւ (անտիպ):

⁸ Başbakanlık Cumhuriyet Arşivi, B.C.A. 030.18.01.02.84798 (Յաւելուած 3):

⁹ Սախտ Չէֆնօղլուի անմշակ արխիւ. «Յակոբ Հանճեան»ի 19.07.1924 թուակիր անցագիրը (Յաւելուած 1):

¹⁰ Քէօմիւրճեան Ե. Չ., Ստամպուլայ պատմութիւն, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1909, ԻԳ տարի, Թիւ 4:

¹¹ Օրմանեան Մ., Ազգապատում, Բ հատոր, Կ. Պոլիս, 1914:

¹² Պէրպէրեան Հ., Նիւթեր Կ. Պոլսոյ Հայ պատմութեան համար, Վիեննա, 1965:

¹³ Ալպօյաճեան Ա., Պալաթու թաղի կազմութիւնը, Երեք դարեան պատմութիւն Պալաթու Ս. Հրէշտակապետ Եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1931:

¹⁴ Կարապետեան Պ., Հնգադարեան յիշատակարան Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ, Իսթանպուլ, 1935:

¹⁵ Անասեան Հ. Ս., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երեւան, 1957:

¹⁶ Սիրունի Յ., Պոլիս եւ իր դերը, Ա. հատոր, Պէյրութ, 1965; Բ. հատոր, Պէյրութ, 1970; Գ հատոր, Անթիլիաս, 1987; Դ. հատոր, Անթիլիաս, 1988:

¹⁷ Գոյումճեան Լ., Կտակ եւ յատկացում, Կ. Պոլիս, 1934: Հայ համայնքային անցուդարձեր, Ստամպուլ, 1950:

¹⁸ Խառատեան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը XV-XVII դդ., Երեւան, 2007:

Արժեքաւոր են նոյնպէս Տքք. Գ. Գըրըքճեանի¹⁹, Մ. Երամեանի²⁰, Յ. Շահ-նազարի²¹, Յ. Քօսեանի²² եւ Տ. Գասպարեան-Գ. Ատիլ-Հ. Խտշեան խմբակի²³, ինչ-պէս նաեւ Տ. Պալեան, Ա. Եօզէր, Ա. Եանըզեան, Յ. Քիւրքճեան²⁴ խմբակի ուսում-նասիրութիւնը, որոնք եւս տեղեկութիւններ կուտան Պոլսոյ եւ պոլսահայ հաստա-տութեանց մասին:

Առանձնակի արժէք կը ներկայացնեն Պոլսոյ Եկեղեցիներու, Վարժա-րաններու, ինչպէս նաեւ գանազան այլ հաստատութեանց Յուշամատենները, որոնք իրենց պարունակած տեղեկութիւններով լոյս կը սփռեն Կ. Պոլսոյ մեզ հե-տաքրքրող ժամանակաշրջանի պատմութեան: Ատենախօսութեան շարադրման առթիւ օգտագործուած են Մ. Հանէսեանի²⁵, Թ. Ազատեանի²⁶, Վ. Քէօսեանի²⁷, Յ. Չինար-Պ. Էրզեանի²⁸, Թ. Ազատեան - Մ. Գօշունեանի²⁹ կողմէ պատրաստուած յուշամատեններ: Նոյնպէս յիշատակութեան արժանի են Կ. Պոլսոյ Հայոց Պատ-րիարքարանի Շողակաթ³⁰ տարեգիրքերը, Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոցի տարե-ցոյցները³¹, որոնք 1900-1910 թթ. կը կազմուին Հ. Ասատուր, Տքք. Ն. Տաղաւա-րեան, Դ. Խաչկունց, Տ. Արփիարեան եւ Ա. Ալպօյաճեանի միասին ջանքերով, 1924-1929 թթ. Մ. Չուհաճեան եւ Թ. Ազատեանի կողմէ, որմէ վերջ 1930-1949 թթ. այս պաշտօնը կը ստանձնեն խմբագրական կազմ մը, ինչպէս նաեւ Ս. Մխիթա-

¹⁹ Տ. Գ. Գ., Պատմութեան համար ակնարկ մը Իսթանպուլի եւ Սամաթիոյ թաղի նախկին շրջաններու, Իսթանպուլ, 1957:

²⁰ Երամեան Մ. Ա. Քահանայ, Պատմութիւն Արմաշու, Երեւան, 1991:

²¹ Շահնազար Յ., Սանասարեան Կտակի դատը, Իսթանպուլ, 1939:

²² Քօսեան Յ. Վրդ., Գերեզմանատուն Կաթողիկէ Հայոց Կ. Պոլսոյ, Վիեննա, 1931:

²³ Ատիլ Գ., Խտշեան Հ., Գասպարեան Տ., Ազգային Գերեզմանատուն Հայոց Շիշլիի, Կ. Պոլիս, 1922:

²⁴ Պալեան Տ., Եօզէր Ա., Եանըզեան Ա., Քիւրքճեան Յ., Համայնապատկեր Հանրապետական շրջանի Իսթանպուլի հայ գրականութեան, Իսթանպուլ, 1957:

²⁵ Հանէսեան Մ., Հարիրքսանեհինգամեայ յրեւեան Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ, Կ. Պոլիս, 1932:

²⁶ Ազատեան Թ., Յուշամատեն Գարակէօզեան Վարժարանի (1913-1948), Իսթանպուլ, 1949: Յիշատակարան ուսուցչաց օգնութեան սնտուկի (1900-1930), Իսթանպուլ, 1930:

²⁷ Քէօսեան Վ., Յուշամատեն Սուրբ Փրկիչ Հայոց Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1994:

²⁸ Չինար Յ., Էրզեան Պ., Հարիրամեայ յիշատակարան Գալֆաեան Տան, Տպարան Օյա, Իսթանպուլ, 1966:

²⁹ Ազատեան Թ., Գօշունեան Մ., Արմաշու մուրթիոյ Հանրապետութեան 15 Ամեակի Առթիւ, Իսթանպուլ, 1938:

³⁰ Շողակաթ Տարեգիրք 1954, Ստամպուլ, 1955: Շողակաթ Տարեգիրք, Ստամպուլ, 1962: Շողակաթ Տարեգիրք 1971-72, Իսթանպուլ, 1973:

³¹ Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1900: Տարեցոյց Ազգային Հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1924: Ընդարձակ Տարեցոյց 1925, Կ. Պոլիս, 1926: Ընդարձակ Տարեցոյց 1926, Կ. Պոլիս, 1927: Ընդարձակ Տարեցոյց, Կ. Պոլիս, 1927: Ընդարձակ Տարեցոյց, Կ. Պոլիս, 1928: Ընդարձակ Տարեցոյց Ս. Փ. Ազգային Հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1930: Ընդհանուր Տարեցոյց Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1931: Ընդարձակ Տարեցոյց, Ստամպուլ, 1932: Տարեցոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1935: Տարեցոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի, Իսթանպուլ 1936: Ընդարձակ Տարեգիրք Հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

րեանի ժողովրդական տարեցոյցները³², որոնք տեղեկութիւններ կը պարունակեն համայնքի տնտեսական կեանքի մասին:

Յիշատակութեան արժանի է Կ. Պոլսոյ աքսորեալ պատրիարք Զաւէն Արք.ի յուշերը³³, որ հարուստ տեղեկութիւններ կուտայ իր շրջանին մասին, Լ. Վարդանի³⁴ ուսումնասիրութիւնը, ուր հեղինակը կը լուսաբանէ Հայոց Տեղահա-նութեան եւ Լքեալ Գոյքերու գրեթէ բոլոր օրէնքները: Արժեքաւոր աշխատութիւն-ներ են Ե. Բարսեղովի³⁵ եւ Վ. Տատրեանի ուսումնասիրութիւնները³⁶, ուր Հայոց Տեղահանութեան պատմութիւնը կը ներկայանայ բաւական մանրակրկիտ: Ուշադրութեան արժանի է Ն. Օնարանի ուսումնասիրութիւնը³⁷, որ ըլլալով առա-ջին «Հայոց Լքեալ Գոյքեր»ու մասին թուրք հեղինակի մը աշխատութիւնը, ան-կողմնակալ ու անաչառ մօտեցումով կը ներկայացնէ Իթքիհատականներու ինչ-պէս նաեւ նորակազմ Հանրապետական Թուրքիոյ, հայոց հանդէպ վարած թրքացման քաղաքականութիւնը, արժեքաւոր վաւերագրերու եւ փաստաթուղթե-րու վերլուծութեամբ: Աղբիւրագիտական արժէք կը ներկայացնեն Մ. Պէպիրօղլու-յի ուսումնասիրութիւնները³⁸, որոնցմէ առաջինին մէջ հեղինակը, կուտայ ու կը մեկնաբանէ Թանգիմաթին մինչեւ Բ. Սահմանադրութիւն Հայոց կանոնագրութիւն-ները, իսկ երկրորդին մէջ՝ 1453 թուականէն սկսեալ Օսմանեան կայսրութեան շրջանին հրապարակուած փոքրամասնութեանց բոլոր կանոնագրութիւնները:

Պոլսահայերու մասին արժեքաւոր տեղեկութիւններ կը փոխանցեն նաեւ Ա. Եարմանի³⁹, Բ. Թուրլաճի⁴⁰, Գ. Բամպուքճեանի⁴¹, Ճ. Սէյֆէլիյի⁴², Ճ. Ուլույի⁴³, Շ. Քըլըջի⁴⁴ ուսումնասիրութիւնները, Կ. Եօզտողան, Ֆ. Իւսթէլ, Գ. Գարագաշլը եւ Ֆ. Քէնթէլի միասնական աշխատութիւնը⁴⁵, ինչպէս նաեւ Թուրքիոյ Հանրապետու-թեան 75-ամեակի կարգադիր յանձնախումբի կողմէ պատրաստուած գրքոյկը⁴⁶:

³² ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1935, Ա. Տարի: ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1937: ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1938: ժողովրդական Տարեցոյց, Ստանպուլ, 1939:

³³ Զաւէն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. Վաւերագրեր եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947:

³⁴ Վարդան Լ., Հայկական Տասնընկուորդ եւ Հայերու Լքեալ Գոյքերը, Պէյրութ, 1970:

³⁵ Բարսեղով Ե., Հայերի ցեղասպանութեան համար նյութական պատասխանատւութիւնը, Երեւան, 1999:

³⁶ Dadrian V. N., Ermeni Soykırımı Tarihi, İstanbul, 2008.

³⁷ Onaran N. Emval-i Mevruke Olayı Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, İstanbul, 2010.

³⁸ Bebiroğlu M., Tanzimattan II. Meşrutiyete Ermeni Nizamnameleri, İstanbul, 2003. Osmanlı Devleti'nde Gayrimüslim Nizamnameleri, İstanbul, 2008.

³⁹ Yarmar A., Osmanlı sağlık Hizmetlerinde Ermeniler ve S. Prçiç Ermeni Hastanesi Tarihi, İstanbul, 2001.

⁴⁰ Թուրլաճեան Բ., Իսթանպուլի Հայոց Եկեղեցիները, Իսթանպուլ, 1991: Tarih Boyunca Batı Ermenileri Cilt 4(1923-1966), İstanbul, 2009.

⁴¹ Pamukciyan K., Zamanlar, Mekanlar, İnsanlar, İstanbul, 2003.

⁴² Seyfeli C., İstanbul Ermeni Patrikliği, İstanbul, 2005.

⁴³ Ulu C., Türkiye Cumhuriyeti'nde Ermeniler, Ankara, 2009.

⁴⁴ Kılıç Ş., Biz ve Onlar, İstanbul, 1992.

⁴⁵ Özdoğan G. G., Üstel F., Karakaşlı K., Kentel F., Türkiye'de Ermeniler Cemaat-Birey-Yurttaş, İstanbul, 2009.

⁴⁶ Türkiye Ermenileri Cemaati 75. Yıl Tertip Heyeti, 75. Yılda Türkiye Ermenileri, İstanbul, 1998.

Առանձնակի կարեւորութիւն ունի Հ. Սորկէնթաուի յուշագրութիւնը⁴⁷, որ կը հաղորդագրէ բացառիկ տեղեկութիւններ Ա. համաշխարհային պատերազմի ընթացքին հայոց ապրած աղէտի մասին:

Արժէքաւոր են Չ. Օքրօսեանի⁴⁸, Է. Մաճարի⁴⁹, Ա. Ազթարի⁵⁰, Է. Մահմուտեանի⁵¹ եւ Ռ. Պալիի աշխատութիւնները⁵², որոնք փոքրամասնութեանց հանրապետական շրջանի ապրումներուն մասին հարուստ տեղեկութիւններ կը փոխանցեն:

Ուշադրութեան արժանի են, Ա. Չէրքէզեանի յուշագրութիւնը⁵³, Ե. Քէմալի վէպը⁵⁴, Տ. Կիւվէհի⁵⁵, Պ. Օրանի⁵⁶ եւ Զ. Արքայի⁵⁷ ուսումնասիրութիւնները, որոնք Հանրապետական թուրքիոյ վարած թրքացման քաղաքականութեան մասին տուեալներ կը պարունակեն: Կարելի է Յ. Արք. Չոլաքեանի ուսումնասիրութիւնը⁵⁸, որ հարուստ տեղեկութիւններ կը փոխանցէ պոլսահայ կաթողիկէ համայնքի Ա. Յակոբ հիւանդանոցին մասին:

Առանձին յօդուածներով տարեգրքերու, հանդէսներու եւ օրաթերթերու սիւնակներուն մէջ, ինչպէս նաեւ կայքէջերու վրայ Կ. Պոլսոյ հայ հանրութեան համայնքային, տնտեսական, կրթական եւ մշակութային կեանքին, անդրադարձած են Շ. Գալուստեան⁵⁹, Հ. Ե. Պօղոսեան⁶⁰, Ա. Ալպօյաճեան⁶¹, Գ. Ապաճեան⁶², Դ. Խաչկունց⁶³, Հ. Ասատուր⁶⁴, Գ. Բամպուրճեան⁶⁵, Ա. Խառատյան⁶⁶, Լ. Գուլում-

⁴⁷ Morgenthau H., Büyükelçi Morgenthau'nun Öyküsü, İstanbul, 2005.

⁴⁸ Okutan C., Tek Parti Döneminde Azınlık Politikaları, İstanbul, 2004.

⁴⁹ Macar E., Cumhuriyet Döneminde İstanbul Rum Patrikhanesi, İstanbul, 2004.

⁵⁰ Aktar A., Varlık Vergisi ve Türkleştirme Politikaları, İstanbul, 2000.

⁵¹ Mahcupyan E., İçimizdeki Öteki, İstanbul, 2005.

⁵² Bali R., Cumhuriyet Yıllarında Türkiye Yahudileri - Bir Türkleştirme Serüveni (1923-1945), İstanbul, 2005. 1934 Trakya Olayları, İstanbul, 2008. Musa'nın Evlatları Cumhuriyet'in Yurttaşları, İstanbul, 2001.

⁵³ Çerkezyan S., Dünya Hepimize Yeter, İstanbul, 2007.

⁵⁴ Kemal Y., Demirciler Çarşısı Cinayeti, İstanbul, 1974.

⁵⁵ Güven D., Cumhuriyet Dönemi azınlık Politikaları ve stratejileri bağlamında 6-7 Eylül Olayları, İstanbul, 2006.

⁵⁶ Oran B., Türkiye'de Azınlıklar, İstanbul, 2004.

⁵⁷ Arı K., Büyük Mübadele, İstanbul, 2003.

⁵⁸ Չոլաքեան Յ. Արք., Մեր պատմական Ա. Յակոբ Հիւանդանոցը երէկ եւ այսօր, Իսթանպուլ, 2004:

⁵⁹ Գալուստեան Շ. Արք., Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան պատմական դերը. «Շողակաթ», 1962, Յուլիս-Դեկտեմբեր, Ստամպուլ, 1962, էջ 8:

⁶⁰ Պօղոսեան Հ. Ե., Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1950-1951: Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1952-1953:

⁶¹ Ալպօյաճեան Ա., Կազմութիւն Արեւմտահայութեան, «Շողակաթ», 1962, Յուլիս-Դեկտեմբեր, Ստամպուլ, 1962, էջ 23:

⁶² Ապաճեան Գ., Հայերու անուամբ կազմուած առաջին թաղեր եւ իսթանպուլահայ բնակչութիւնը գրաման յաջորդող տարիներուն մէջ, «Շողակաթ», 1954, էջ 71:

⁶³ Խաչկունց Դ., Կ. Պոլսոյ հայ գաղութին ծագումը, Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1902, էջ 201:

⁶⁴ Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց Պատրիարքները, Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի Կ. Պոլիս, 1901, էջ 94-95:

ճեան⁶⁷, Օ. Քէօքէր⁶⁸, Ռ. Պալի⁶⁹, Ա. Չէրքինժոլու⁷⁰, Ա. Աստոյան⁷¹, Ա. Հիւր⁷², Վ. Կոմիկեան⁷³, Է. Մաճար⁷⁴, Վ. Տէր Յակոբեան⁷⁵, Գ. Ատիլ, Հ. Խտշեան, Տ. Գասպարեան⁷⁶, Յ. Հինդլեան⁷⁷, Մ. Թօլէլեան⁷⁸, եւ Վ.Սեբրեան⁷⁹:

Թեմայի ուսումնասիրութեան համար արժէքաւոր աղբիւրներ եղան նաեւ Պոլսոյ Ազգային Խնամատարութեան⁸⁰ եւ Սանասարեան Վարժարանի⁸¹ տեղեկագիրները, Հայկական Հարց եւ Հայ Սկիւռք Հանրագիտարանները, «Հայրենիք» եւ «Վէմ» հանդէսները, ինչպէս նաեւ ժամանակաշրջանի պոլսոյ եւ սփիւռքահայ մամուլը՝ «Արեւելք», «Ազդարար», «Նոր Լուր», «Մարմարա», «Ժամանակ», «Առատ», «Բանբեր», «Յառաջ», «Պայքար», «Արեւ», «Մշակ», «Յուսաբեր», «Արաքս», «Հայաստանի Կոչնակ»:

Վերոյիշեալ սկզբնաղբիւրներու եւ ուսումնասիրութիւններու հիման վրայ այս առեւտնախօսութեամբ կը փորձենք արժէքաւորել Ստամպուլի Հայ Համայնքի

⁶⁵ Բամպուրճեան Գ., Մատենագիտութիւն Հանրապետական Յիւնամեայ Շրջանի», Շողակաթ Տարեգիրք, 1978, Իսթանպուլ, 1977, էջ 31:

⁶⁶ Խառատյան Ա., Արեւմտահայերի Ազգային Սահմանադրութիւնը. «Պատմաբանասիրական հանդէս», 1992, 2-3, էջ 55-61:

⁶⁷ Գուլումճեան Լ., Երթեւեկի նոր հրահանգին շուրջ, «Արեւելք», 29.II.1932: Լքեալ Գոյքերու հարցը, Ընդարձակ Տարեցոյց Ս. Փ. Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1931, էջ 87: Օրէնսդրական եւ վարչական խնդիրներ, Ընդարձակ Տարեցոյց Ս. Փ. Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1933, էջ 143: Լքեալ Գոյքերու հարցեր, Ընդարձակ Տարեգիրք Ազգային Հիւանդանոցի, Ստամպուլ, 1940, էջ 37: Վագֆներու օրէնքը եւ գործադրութեան ձեւը, Ընդարձակ Տարեգիրք Ս. Փրկիչ Հիւանդանոցի, Ստամպուլ 1948, էջ 211: Վագֆներու Օրէնքը, Ընդարձակ Տարեգիրք Ս. Փրկիչ Հիւանդանոցի, Ստամպուլ, 1937, էջ 50: Վագֆներու Մատակարարութիւնը (Գ), «Ազդարար», 4.VI.1936:

⁶⁸ Köker Ö., Kürt İsyannının Liderleri Nasıl Yargılandı, Nasıl Asıldı - Toplumsal Tarih, Sayı 67, Temmuz, 1999, İstanbul, s. 4-5.

⁶⁹ Bali R., Musa Dağda Kırk Gün'ün Hikayesi, Tarih ve Toplum, Şubat, 1998, s. 21-23.

⁷⁰ Çetinoğlu S., Ermeni Emval-i Metrukeleri üzerine, www.birikimdergisi.com/birikim/makale, s. 12.

⁷¹ Աստոյան Ա., Հայերի ունեւորման գործնաբան Օսմանյան Կայսրութիւնում 1915-1923 թթ., «Վէմ» համահայկական հանդէս, Երեւան, 2010, թիւ 3(31), հուլիս-սեպտեմբեր, էջ X: Կարն Սանասարեան վարժարանը. «Հայութիւն» Շաբաթաթերթ, Երեւան, 1997, Մարտ, թիւ 3:

⁷² Hür A. Ermeni Mallarına Kim Kondu, Taraf Gazetesi, 2 III.2008.

⁷³ Կոմիկեան Վ., Կեդրոնականը՝ Հանրապետական շրջանին, Շողակաթ Տարեգիրք, 1971-1972, Իսթանպուլ, 1972, էջ 28:

⁷⁴ Macar E., Basbakanlık Cumhuriyet Arşivi Belgelerine Göre Tek Parti Döneminde Cemaat Vakıflarının Sorunları, www.boisohays.com, Makale köşesi.

⁷⁵ Տէր Յակոբեան Վ., Իսթանպուլի Հայ Եկեղեցիները հայ ոճի հանդէպ, Ընդարձակ Տարեցոյց Ս. Փ., Իսթանպուլ, 1943, էջ 112-115:

⁷⁶ Ատիլ Գ., Խտշեան Հ., Գասպարեան Տ., Ազգային գերեզմանատուն հայոց Շիշլիի, Կ. Պոլիս, 1922, էջ 14-31:

⁷⁷ Հինդլեան Յ., Իսթանպուլի հայ վարժարաններուն յատուկ միօրինակ կանոնագիրը եւ ուսմանն օրագիրը, Տարեցոյց Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1938, էջ 127:

⁷⁸ Թօլէլեան Մ., Գրական տարին Դ. Պոլիս, «Ազդարար», 8.I.1934:

⁷⁹ Seropyan V., Ermeni Basımevleri, İstanbul Ansiklopedisi Cilt III., İstanbul, 1994, s. 181-183.

⁸⁰ Ազգային Խնամատարութիւն, Ընդհանուր Տեղեկագիր Առաջին Վեցամսեայ (1 Մայիս, 1919 - 31 Հոկտեմբեր, 1919), Կ. Պոլիս, 1920:

⁸¹ Զսանամեայ Տեղեկագիր Սանասարեան Վարժարանի (1881-1901), Կ. Պոլիս, 1903:

վաղ Հանրապետական շրջանի (1923-1939 թթ) պատմությունը եւ լուսաբանել նաեւ անոր նոյն շրջանի հարցերն ու դժուարությունները:

ԱՍԵՆԱՆՕՍՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ. Ներկայացուող ատենախօսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներէ, եզրակացությունէ, օգտագործուած աղբիւրներու եւ գրականութեան ցանկէ: Ատենախօսությունն ունի նաեւ յաւելուածներ:

ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ մէջ հիմնաւորուած են ուսումնասիրուած թեմայի գիտական նորոյթն ու արդիականությունը, սահմանուած են ատենախօսութեան նպատակն ու խնդիրները: Քննական վերլուծութեան ենթարկուած են օգտագործուած աղբիւրները, գրականութիւնն ու մամուլը:

ԱՐԱՋԻՆ ԳՆՈՒՄԸ - ԱՍԱՄՊՈՒԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ, կը բաղկանայ երեք ենթագլուխներէ:

Առաջին ենթագլխի մէջ, որն է՝ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՄԱՅՆՔԸ (ՀԱՄԱՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 1453 ԹՈՒՎԱՆԵՆ ՄԻՆՉԵԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ), համառօտ կերպով կը ներկայացուի նշուած ժամանակամիջոցի ընթացքին Պոլսահայութեան դրութիւնը՝ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին հիմնադրուիլը, Պատրիարքարանի հաստատումն ու Սամաթիայէն Գումգաիու տեղափոխուիլը, Պոլսոյ հայ գաղութի ստուարացման ազդակները⁸², նախասահմանադրական շրջանին Պոլսահայ գաղութին մէջ գոյութիւն ունեցող զանազան խաւերն ու հոսանքները, որոնք իրենց դիրքին շնորհիւ հեղինակութիւն դառնալով, ազգային գործերու մէջ իրենց կամքը կը պարտադրեն ժողովուրդին, Արեւմտահայութեան Յ. Կոլոտ Պատրիարքով սկսող մտաւորական վերածնունդը⁸³, Ազգային Սահմանադրութիւնն ու ժողովուրդին ձեռքագատուիլը մեծամեծներու կամայական տնօրէնութիւնէն, ապա անոր ջնջուիլն ու կրկին ոյժի մէջ մտնելը:⁸⁴

Երկրորդ ենթագլխի մէջ՝ ԹՈՒՐԹԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ խորագրով կը ներկայացուի Քեմալական ազգայնականութեան մշակութային մեծամասնութիւնը ընկճող երկրորդ երեսակը, ուր ան կը պահանջէ բոլոր ոչ-իսլամ տարրերէն լքելով իրենց ազգային ինքնութիւնը, միանուիլով թուրք լեզուի, մշակոյթի եւ գաղափարի շուրջ: Անդրադարձ կը կատարուի թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ ստորագրուած «Թուրք-Յոյն Փոխանակութեան վերաբերեալ պայմանագիր եւ Փրոթոզոլ»ի⁸⁵, Հրեայ, Հայ եւ Յոյն համայնքներու Լօզանի 42. յօդուածի Ա. հատուածէն հրաժարման⁸⁶, «Թուրք-Հայ Բարձրացման Միութեան» արարքներուն, միակուսակցական վարչութեան գործադրած փոքրամասնութեանց նկատմամբ իր խտրական որոշումներով յատկանշական, թրջացման քաղաքականութեան: 2 Յուլիս 1924 թուակիր Երթեւեկի

⁸² Սիրունի Յ., Պոլիս եւ իր դերը, Ա հատոր, էջ 319-322:

⁸³ Սիրունի Յ., Պոլիս եւ իր դերը, Բ հատոր, էջ 108:

⁸⁴ Խառատյան Ա., Արեւմտահայերի Ազգային Սահմանադրութիւնը. «Պատմա-բանասիրական հանդես», Երեւան, 1992, թիւ 2-3, էջ 55-61: Սիրունի Յ., Պոլիս եւ իր դերը, Գ. հատոր, էջ 45-52: Երամեան Մ. Ա. Քահանայ, Պատմութիւն Արմաշու, էջ 63: Հայկական հարց հանրագիտարան, էջ 16: Գոյունձեան Լ., Հայ Համայնքային Անցուդարձեր, էջ 5: **Bebiroğlu M.**, Tanzimat'tan II. Mesrutiyet'e Ermeni Nizamnameleri, s. 214-215. Նոյն տեղէն, էջ 158:

⁸⁵ **Macar E.**, Cumhuriyet Döneminde İstanbul Rum Patrikhanesi, s. 98.

⁸⁶ **Bali R.**, Cumhuriyet Döneminde Azınlık Politikaları. Birikim Kasım, 1998, s. 81. **Aktar A.**, Varlık Vergisi ve 'Türkleştirme' Politikaları, s. 113.

օրէնքով Հայոց կ'արգիլուի վերադառնալ իրենց ծննդավայրը, արտասահման մեկնող հայերուն կը տրուի անցագրեր, որոնց վրայ կ'ընթացէ «Արգիլուած վերադարձ» բառերը⁸⁷: 31 Մարտ 1926 թ. պաշտօնաթերթին մէջ հրատարակուող թիւ 788 «Պաշտօնէից Օրէնք»ի 4. յօդուածի տրամադրութեան համաձայն, պաշտօնէյ ըլլալու համար նախապայման կ'ըլլայ «Թուրք» ըլլալ:

Անդրադարձ կը կատարուի նաեւ փոքրամասնութեանց զինուորական ծառայութեան հարցին,⁸⁸ 4 Յունիս 1932-ին Թուրքիոյ Ազգային Սեծ Ժողովին մէջ ընդունուող 2007 համար «Թուրքիոյ մէջ Թուրք Հայրենակիցներուն Յատուկ Արհեստ եւ Ծառայութիւններու մասին Օրէնք»ին, Քիւրտ ազատագրական շարժման երկու կարեւորագոյն ապստամբութիւններուն՝ Շէյխ Սայիտի (1925) եւ Տէրսիմի (1937)⁸⁹:

14 Յունիս 1934 թ. եւ 2510 համար «Գաղթականներու եւ Ապաստանեալներու Ջետեղման Օրէնք»ի հրատարակութենէն քանի մը օր վերջ Հրեայ քաղաքացիները Թրաքիոյ մէջ, շրջանէն հեռացնելու նպատակով կ'ենթարկուին սպառնալիքներու, տնտեսական արգելքներու ու բռնութիւններու, ինչպէս նաեւ բազմանդամ խումբերու կողմէ կը թալանուի անոնց տուններն ու գործարանները⁹⁰:

«Սուսա Լերան Քառասուն Օրը» վէպի հրատարակութեան յաջորդող օրերուն կը ստեղծուի հակահոսանք եւ Թուրք թերթերու, ինչպէս նաեւ կառավարութեան թելադրանքով հրեաներն ու յաջորդող օրերուն նաեւ հայերը կը պարտաւորուին բողոք ու ցասում յայտնել վէպի գաղափարներուն դէմ⁹¹: 3512 թիւ «Հաւաքականութեանց (Ընկերակցութեանց) Օրէնք»ի տրամադրութիւններուն համաձայն «բարեգործական, կրօնական, ընկերային, առողջապահական, կրթական եւ մշակութային բոլոր հաստատութիւնները կը ստիպուին մատակարարուիլ աշխարհիկ անձերէ կազմուած մարմիններու կողմէ եւ այս պատճառաւ Հայոց Վարչական Ժողովը 15 Յուլիս 1939-ին ինքզինքը «լուծեալ» կը հռչակէ:

Երրորդ ենթագլխի մէջ, ԳԱՂԹԱՎԱՅՐՆ ՈՒ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԵՆ ՎԵՐՋ, կը ներկայացուի Ջաւէն Պատրիարքի Պոլսէն հեռանալը, Հանրապետութեան հռչակումով կազմուող պետութեան նոր վարչական դրութիւնն ու անոր կապուած Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի կրկին ձեւաւորուող վարչական կազմը:

26 Յունիս 1927-ին, չորս ու կէս տարիներ առանց Պատրիարքի մնալէ վերջ, որպէս Պոլսոյ 80-րդ Պատրիարք կ'ընտրուի Մեսրոպ Արք. Նարոյեան⁹²: 1929 թուականին Պատրիարքի վարչական գործունէութիւնը թոյլ նկատող վեց հոգեւորականներ, գրաւոր դիմում կատարելով կը պահանջեն անոր հրաժարումը: 1933 թ. Յունիսին փոքրամասնութեանց ներքին գործերը վարելու համար կառավարութիւնը կը պատրաստէ օրինագիծ մը, որուն ազդեցութեամբ 13 Սեպտեմբեր 1934-ին Վահան Սուրէնեանի վարչութիւնը կը ջնջէ «Ազգային Սահմանադրութիւն»

⁸⁷ Սաիտ Չէթինօղլուի անմշակ արխիւ. «Յակոբ Հանձեան»ի 19.07.1924 թուակիր անցագիրը (Յաւելուած 1):

⁸⁸ **Okutan Ç.**, Tek Parti Döneminde Azınlık Politikaları, s. 131-136.

⁸⁹ **Köker O.**, Kürt İsyanlarının Liderleri Nasıl Yargılandı, Nasıl Asıldı - Toplumsal Tarih, Sayı 67, Temmuz, 1999, İstanbul, 1999, s. 4-5.

⁹⁰ **Bali R.**, 1934 Trakya Olayları, s. 1.

⁹¹ **Bali R.**, Musa'nın Evlatları Cumhuriyet'in Yurttaşları, s. 128-134.

⁹² Ընդարձակ Տարեցոյց, 1928, էջ 352-353:

նը»: Ըստ 5404 թի օրենքի տրամադրություններուն համայնքային մարմինները մատակարարական տեսակետէ կենթարկուին Վագֆներու վարչութեան հակակշիռին:

Փաստացի կը ներկայացուի 14 Յունիս 1934 թ. եւ 2510 համար «Փաղթականներու եւ Ապաստանեալներու Ջետեղման Օրէնք»ի գործադրութեան դրուելէն շուրջ վեց ամիս առաջ միջին Անատոլու գտնուող Հայերուն Ստամպուլ արտորուիլը⁹³, ինչպէս նաեւ 1938 թ. Ներքին գործոց Նախարարութեան առաջարկով ու Սպայակոյտի նախագահութեան հաւանութեամբ տեղահանուիլը՝ Կեսարիոյ Կէսի գաւառակի էֆթէրէ գիւղի հայ բնակիչներուն⁹⁴:

Անդրադարձ կը կատարուի 1938 թ. հրատարակուող 3513 համար օրէնքով որդեգրուած «Անհատ մատակարար»ի (Թէք միւլէվէլի) դրութեան եւ 14 Յունիս 1939 թ. գործադրութեան դրուած 3512 թի «Ընկերակցութեանց Օրէնք»ին:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՒԽԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ, նոյնպէս կը բաղկանայ երեք ենթադրույններ:

Առաջին ենթադրույնը կը բաղկանայ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ: ՀԱՅՈՑ ԼԵՍԱԼ ԳՈՅՔԵՐԸ: ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ԽԱՆ: ԲԱՆԿԱԼԹԻ ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶԱՆԱՏՈՒՆԸ, խորագրեալ բաժիններէն:

«Համայնքի տնտեսական կեանքը» բաժնին մէջ նախ համառօտ կերպով անդրադարձ կը կատարուի Օսմանեան կայսրութեան Հայ վաճառականներուն, որոնք մինչեւ 1914-ի Ընդհանուր պատերազմը, երկրի մէջ առաջ կը տանին վաճառականութիւնը, ինչպէս նաեւ արհեստաւորները՝ սեղանաւոր, ոսկերիչ, հացագործ, ժամագործ, կօշկակար, շղարշի վաճառական, մետաքսագործ եւլն, որոնք ժժ. դարուն Պոլսահայութեան հիմնական հատուածը կը կազմեն եւ բազմաթիւ բնագաւառներու մէջ չեն ունենար մրցակիցներ մինչեւ Հանրապետութեան շրջան:

Ապա կը ներկայացուի Հանրապետութեան շրջանին Ստամպուլի տնտեսական կեանքի խորտակումը, սնանկացումները, որմէ բաժին կը ստանան նաեւ հայերը՝ զրկուած ըլլալով պետական պաշտօնեայ ըլլալու ինչպէս նաեւ Անատոլու երթեւեկելու իրաւունքէն, վճարելով թուրքերէն գանձուած տուրքերուն կրկնապատիկը կամ եռապատիկը: Ստամպուլի հայութիւնը բաւական կ'ազդուի նաեւ 1929 թուականին սկսող աշխարհատարած տնտեսական տագնապէն, որ կը շարունակուի մինչեւ 1934 թ.: Այսպէս՝ տնտեսական հարկադրանքով, թէ՛ Ստամպուլէն եւ թէ՛ գաւառներէն հոսանք մը կը գոյանայ դէպի արտասահման եւ կը ծաւալի հետզհետէ: Բայց, ճարտարարուեստի շատ մը ճիւղերուն մէջ ինչպէս՝ հիւտամեղէնի արտադրութիւն, շղարշի վաճառականութիւն, կօշկակարութիւն, շինանիւթերու շինութիւն եւ առետուր, մետաքսեղէնի եւ մուշտակի վաճառականութիւն եւլն. իրենց առաջատար դիրքը կը պահեն Հայ վաճառականներ⁹⁵:

«Հայոց Լքեալ Գոյքերը» բաժնին մէջ նախ անդրադարձ կը կատարուի Իթթիհատականներու իշխանութեան շրջանին, երբ կը հրատարակուին շուրջ 100 օրէնքներ, որոնց կարգին են նաեւ Հայոց «Տեղահանութեան» եւ «Լուծարման» Օրէնքները, ու նախորդող օրէնքներն ու կանոնագրութիւնները, որոնց շնորհիւ

⁹³ Robert P. Skinner, Embassy of the United States of America, Ankara, 2.III.1934, No.151 (Յաւելուած 2):

⁹⁴ Başbakanlık Cumhuriyet Arşivi, B.C.A. 030.18.01.02.84798 (Յաւելուած 3):

⁹⁵ Ժողովրդակալ Տարեցոյց, 1938, էջ 62:

կը ստուգուին երկրի ոչ-իսլամ տարրերն ու զինուորականներուն կողմէ կը գրաւուին անոնց գէնքն ու զինամթերքը, որպէս նախաքայլ տեղահանութեան ու թաւանի:

Տեղահանութեան Օրէնքը կը հրատարակուի 27 Մայիս 1915 թ. եւ օրէնքի որոշումը կառավարութիւնը կ'ընդունի 30 Մայիս 1915 թ., բայց Ներքին գործոց Նախարար Թալեաթը, կառավարութեան դրկած 26 Մայիս 1915 թ. արտօնագրով կը տեղեկացնէ, թէ արդէն սկսած է հայոց տեղահանումը:

Առժամեայ Լուծարման Օրէնքը (Լքեալ Գոյքերու Օրէնք), որ կը մշակուի 26 Սեպտեմբեր 1915 թ., կուգայ իրաւական շարժառիթ ստեղծել կատարուած թաւանի գործողութիւններուն: Օրէնքով եւ օրէնքի ճիւղ յօդուածին համաձայն պատրաստուած 26 Հոկտեմբեր 1331 (8 Նոյեմբեր 1915) թ. կանոնագրութեամբ կը կազմուին Լուծարման Յանձնաժողովներ, ինչպէս նաեւ Յանձնախումբեր, որոնցմէ առաջինի գործունէութիւնը կը սահմանուի մէկ կամ մի քանի քաղաքներով, իսկ երկրորդինը՝ գիւղաքաղաքով: Յանձնախումբը, տեղահանման հրահանգն ստանալէ վերջ, երեք օրուայ մէջ իր գործունէութեան տեղեկագիրը պէտք է յանձնէ Լուծարման յանձնաժողովին: Կը կազմուին 33 յանձնաժողովներ, որոնցմէ ամէն մէկը կ'ունենայ երկու տետրակ, ուր գրի առնուած կ'ըլլան տեղահանուած հայերու լքեալ գոյքերուն ցանկը՝ անոնց տեսակը, քանակը, գնահատուած արժէքն ու տիրոջ անունը, որոնց ձակատագիրը այսօր յայտնի չէ⁹⁶:

Սոյն բաժնին մէջ կը ներկայացուի Օսմանեան կայսրութեան պետական պիտձէի 1913-1918 թթ. մեծ աճը, հակառակ պատերազմի ծանր պայմաններուն⁹⁷: Իթթիհատական կառավարութիւնը կը փորձէ իւրացնել նաեւ հայոց օտար ապահովագրական ընկերութիւններու մօտ գտնուող գումարները⁹⁸:

Կը ներկայացուի նաեւ տուեալներ, ըստ որոնց առնուազն 1930-ականներու սկիզբը «Լքեալ Գոյքերու Հաշիւը», պիտձէի կարեւոր եւ գլխաւոր եկամուտի աղբիւրներէն մէկը կ'ըլլայ⁹⁹:

1914 թուականի տուեալներուն համաձայն Օսմանեան երկրին մէջ Հայ համայնքը կ'ունենայ 2538 եկեղեցիներ, 451 վանքեր եւ 2000 դպրոցներ: ՈՒՆԵՍԿՈՅԻ (UNESCO) 1974 թուակի տեղեկագրութեան համաձայն մնացած է միայն 913 եկեղեցի եւ վանք, որոնցմէ 464 հատը այդ թուականէն վերջ արդէն փլցուած, 252 հատը իր ձակատագրին լքուած է եւ 197 հատը վերանորոգութեան կարիքն ունի¹⁰⁰:

Այսպէս՝ Իթթիհատականներու ծրագրած ու սկսած գործը՝ հայերու տնտեսական մրցակցութենէն ազատուիլ, ստեղծելով թուրք դրամատէրեր, տէր դառնալ երկրի տնտեսութեան, մինչ այդ կարգադրել թուրք գաղթականներու բնակութեան հարցը, ինչպէս նաեւ լեցնել Պետական գանձը յանուն տեղահանուած հայոց ունեցումներին, մինչեւ վերջ կը տանին Զեմալականները:

«Սանասարեան Խան» բաժնին մէջ կը ներկայացուի բարերար Մկրտիչ Սանասարեանի կողմէ 1881 թուականին Երզուրումի մէջ բացուած Սանասարեան վարժարանն ու 1899 Յուլիս 21-ին վարժարանի Պետական Դրամատան մէջ

⁹⁶ Onaran N., Emval-i Metruke Olayı, s. 74 .

⁹⁷ Cetinoğlu S., Ermeni Emval-i Metrukeleri üzerine, www.birikimdergisi.com/birikim/makale, s. 12.

⁹⁸ Morgenthau H., Büyükelçi Morgenthau'nun Öyküsü, s. 249.

⁹⁹ Onaran N., նշծ.աշխ., էջ 269:.

¹⁰⁰ Hür A., Ermeni Mallarına Kim Kondu, Taraf Gazetesi, 2 III.2008.

գտնուող անձեռնմխելի գումարէն 19.000 Օսմանեան լիրա վճարելով Ստամպուլի մէջ գնուող Սանասարեան Խանը, որուն միւլթվէլիին (կտակակատար) կ'ըլլայ Թուրքիոյ Հայոց օրուան Պատրիարքը: Սանասարեան վարժարանը 1912 թ. կը տեղափոխուի Սեբաստիա, ուր կը բացուի Ս. Նշան վանքի շրջափակին մէջ, իսկ 1915-ին տեղի ունեցած դէպքերու ընթացքին իր բոլոր գոյքերով, գիրքերով եւ գործիքներով կը գրաւուի կառավարութեան կողմէ եւ զոհ կ'երթան պաշտօնէութիւնն ու ամբողջ աշակերտութիւնը:

1928 Հոկտեմբերին Թուրք կառավարութիւնը Սանասարեան Խանը իբր «լքեալ գոյք» կը փոխանցէ Ստամպուլի կուսակալութեան, իբր անոր սեփականութիւնը: Կ'առգրաւէ խանին «վագֆ» եղած եկամուտները եւ կ'արգիլէ միւլթվէլիի Մեսրոպ Նարոյեան Պատրիարքը գանոնք գանձելէ: Սանասարեան Խանի ու կտակի դատը կը սկսի 23 Հոկտեմբեր 1928-ին եւ կը վերջանայ 15 Մայիս 1935-ին: Իրաւական Բ. Ատեանը իր վճիռը կը յայտնէ, որոշելով թէ Սանասարեան Խանը «լքեալ» է եւ կը պատկանի Կուսակալութեան, որն Վճռաբեկը կը հաստատէ 4 Նոյեմբեր 1935-ին¹⁰¹:

«Բանկայթի Հայոց Գերեզմանատունը» բաժնին մէջ անդրադարձ կը կատարուի 1560-էն աւելի առաջ սկզբնաւորութիւն ունեցող Բանկայթի ազգային գերեզմանատան, ուր պետութեան կողմէ կ'արգիլուի ննջեցեալներու թաղումը 1865-ին, համաձայնակի պատճառաւ:

1931-ին Ստամպուլի Քաղաքապետութիւնը կը դիմէ Կալուածահամարի վարչութեան՝ պահանջելով Բանկայթի Հայոց գերեզմանատան իր անունին փոխանցումը, որպէս լքեալ գոյք եւ կը գրաւէ Բանկայթի գերեզմանատունը, արգելք կը դնէ Գերեզմանատան հաստիքին վրայ: Հայոց Պատրիարքարանը դատ կը բանայ Քաղաքապետութեան դէմ: Դատավարութիւնը, որ կը սկսի 1 Մարտ 1931 թ, վերջ կը գտնէ 26 Նոյեմբեր 1934-ին ի նպաստ քաղաքապետութեան: Ապա գերեզմանատան համար դատախազ կը կանգնի Բերայի Թաղային Խորհուրդը: Այսպէս կը սկսի դատավարութեան երկրորդ շրջան մը, որ կը վերջանայ Ներքին Գործավարութեան հրամանով, վարչական եղանակով եւ իրաւախօսութեամբ: 50.000 քառակուսի մէթր հողամասը կ'անցնի Քաղաքապետութեան, իսկ շէնքերը կը թողուին համայնքին (մօտ 6.000 քառակուսի մէթր): Գերեզմանատունը 1939-ին ամբողջական ապաստնականացման կ'ենթարկուի, կը փլցուի գերեզմանատան Ս. Գրիգոր Լուսաւորիչի նուիրուած Խոր Վիրապ Եկեղեցին:

Երկրորդ ենթագլխին մէջ ՀԱՅ ՎԱԳՖՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԾՆԵՐԸ, ՎԱԳՖՆԵՐՈՒ ՕՐԷՆՔԸ, անդրադարձ կը կատարուի հայ վագֆներուն, որոնք են Եկեղեցիները, գերեզմանատուները եւ անոնց յարակից հիւանդանոց, որբանոց, արհեստանոց, վարժարան եւ նման բարեգործական հաստատութիւնները:

Որոշ վագֆի ենթակայ, կալուած կամ հողին սեփականութիւնը ազգին տրամադրուած ազգապատկան կալուածներու կարելոր մասը 30-ական թուականներուն կալուածներու վարչութեան կողմէ որպէս լքեալ գոյք կը գրաւուին, որովհետեւ Ա. Ընդհանուր պատերազմի ու ապրուող ազգային աղէտի պատճառաւ անաւարտ մնացած կ'ըլլան ըստ 1912 թ. «Բարոյական անուններու փոխանցման օրէնքին» կատարուելիք արձանագրութեանց սրբագրութիւնները:

¹⁰¹ Շահնագար 3., Սանասարեան Կտակի դատը, էջ 15:

Վագֆներու օրէնքով ոչ իլլամ փոքրամասնութեանց բոլոր հաստատութիւններուն տնօրինումը կը տրուի Վագֆներու Ընդհանուր Տնօրէնութեան, այսինքն Պետութիւնը կը միջամտէ այս հաստատութեանց ներքին գործերուն, որը բոլորովին խտտոր կը հանդիսանայ Լօզանի Դաշնագրի 40 յօդուածին: Վագֆներու Ընդհանուր Տնօրէնութիւնը յենելով 2762 համար Վագֆներու Օրէնքին, 1936-ին բոլոր միւլթվէլիներէն եւ մատակարար մարմիններէն կը պահանջէ պատրաստել ազգային հաստատութիւններու անշարժ գոյքերու ցուցակը պարունակող յայտարարագրեր: Իսկ 1960-ական թուականներուն կ'որոշէ, թէ այս ազգային հաստատութիւնները 1936 թուականէն վերջ իրաւունք չունին տիրանալու ռեւէ անշարժ գոյքի: Ուստի, սոյն թուականէն վերջ գնելով, ժառանգութեամբ, նուիրատուութեամբ կամ կտակով ձեռք բերուած բոլոր ինչքերը կ'առնուին իրենց ձեռքէն:

Երրորդ ենթագլուխը կը բաղկանայ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ: ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԵՐԸ խորագրեալ բաժնիները:

Համայնքային ու բարեգործական հաստատութիւններու բաժնին մէջ կը ներկայացուին Կ. Պոլսոյ Ազգային Խնամատարութիւնը, Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը, Գալֆայեան Որբանոցը, Գարակէօզեան Ազգ. Արհեստանոց-Որբանոցը, Ուսուցչաց Օգնութեան Սնտուկը, Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ վագֆ եղած Թօքթեան Պանդուկը, ինչպէս նաեւ Կաթողիկէ Հայոց Ս.Յակոբ Հիւանդանոցը:

Եկեղեցիներն ու գերեզմանատուները բաժնին մէջ կը ներկայացուի շրջանի այժմ գոյութիւն ունեցող, ինչպէս նաեւ այժմ գոյութիւն չունեցող Հայ Առաքելական Եկեղեցիները, Հայ Կաթողիկէ համայնքի Եկեղեցիներն ու Բողոքական հայերու ժողովարանները, Կ. Պոլսոյ Հայոց հնագոյն գերեզմանատուները, ինչպէս նաեւ ուսումնասիրուած շրջանի գերեզմանատուները, տեղեկութիւններ փոխանցելով Պալըքլի, Շիշլի եւ Սկիւտարի Հայոց գերեզմանատուներուն մասին:

ԵՐՐՈՐԴ ԳՈՒԻՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, կը բաղկանայ երկու ենթագլուխներ:

Առաջին ենթագլխի մէջ, ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ խորագրին ներքեւ կը ներկայացուի կրթական հաստատութեանց 20-30-ական թթ. կառավարական եւ մատակարարական խնդիրները: 1923 թ., Կ. Պոլսոյ մէջ հայերը կ'ունենան 47 վարժարաններ, ուր ուսում կը ստանան 5865 աշակերտներ¹⁰²:

Կրթական տնօրէնութեան հրահանգով եւ կրթական քննիչի մը նախագահութեամբ Հայ դպրոցներու տնօրէններէ բաղկացած յանձնաժողովի կողմէ պատրաստուած «միօրինակ կանոնագիր եւ ուսման ծրագիր»ի գործադրութիւնը կը սկսի 1937-1938 տարեշրջանին: Կրթական տնօրէնութեան հրահանգով 1936-1937 տարեշրջանին փոքրամասնութեանց Լիսէներու թուրք ուսուցիչներէն մէկը կ'ընտրուի իբրեւ «փոխ տնօրէն», իսկ յաջորդ տարեշրջանին նախակրթարաններու համար «փոխ-տնօրէն» կը նշանակուի սոյն վարժարանի թուրք մշակոյթի կամ թրքերէն լեզուի ուսուցիչներէն մէկը:

1937-1938 տարեշրջանին Ստամպուլահայ հասանալի կ'ունենայ 37 կրթական հաստատութիւններ (ազգային եւ անհատական), որոնց 2 հատը կ'ունենայ

¹⁰² 75. Yıl Tertip Heyeti, 75. Yılda Türkiye Ermenileri, s. 33.

միայն մանկապարտեզ. մէկը միայն միջնակարգ իսկ 3 հատը միջնակարգ եւ լիսկի բաժիններ: Սոյն տարեշրջանին համայնքը կ'ունենայ 177 ուսուցչուհիներ եւ 110 ուսուցիչներ¹⁰³:

Երկրորդ ենթագլխի մէջ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ: ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԳՐԱՏՊՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՄԱՍՈՒԼԸ: ԹԱՏՐՈՆՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ, անդրադարձ կը կատարուի Պոլսոյ մէջ ցայտոր կազմուած մշակութային ընկերութիւններու, կը ներկայացուի հայ տպագրութեան Կ. Պոլիս մուտքը 1567 թ. Աբգար Դպիր Թոբատցիի միջոցաւ, ինչպէս նաեւ Թուրքիոյ Հանրապետութեան շրջանի տպարանները, տպագրուած գիրքերը, թերթերը, հանդէսներն ու տարեցոյցները:

Հանրապետութեան շրջանին, մինչեւ 1946 թուականը կը շարունակուի Հայերէն բեմադրութեան արգելքը, որն կը դրուի 1922 թուականին կառավարութեան կողմէ:

1930-ական թթ. Ստամպուլի մէջ կը ստեղծուի երաժշտական ոգետոր շարժում մը, Կոմիտաս Վարդապետի ծննդեան 60 ամեակի հանդիսութիւններուն առթիւ կը կազմուի «Կեդրոնական Երգչախումբ» մը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ բաժնին մէջ հանրագումարի բերուած են հետազոտութեան հիմնական արդիւնքներն ու եզրահանգումները:

- Կ. Պոլսոյ Պատրիարքութեան հիմերը կը դրուին 1461 թ. Ֆաթիհ Ս. Մէհմէտի նախաձեռնութեամբ, որուն առաջին եւ գլխաւոր դերը կ'ըլլայ որպէս միութեան կեդրոն ծառայել Փոքր Ասիոյ մէջ ցրուած Հայ համայնքներուն: Օսմանեան կայսրութեան շրջանին Պոլսոյ Պատրիարքները, պետական հովանաւորութեամբ եւ պաշտպանութեամբ զօրացած՝ ազատ կերպով կրնան կիրարկել իշխանութիւն, իրենց անմիջական շրջանակին մէջ, թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ հոգեւորականութեան վրայ:

- Արեւմտահայութեան մտաւորական վերածնունդը կը սկսի Յ. Կոլոտ Պատրիարքով: Յովհաննէս Կոլոտ (1715-1741), Յակոբ Նալեան (1741-1748, 1752-1764) եւ Զաքարիա Քաղզուանցի (1773-1781, 1782-1799) Պատրիարքները կարեւոր դեր կը կատարեն Պոլսահայոց մտաւոր եւ բարոյական զարգացման մէջ:

- Ազգային Սահմանդրութիւնը, որ կ'ընդունուի 1860 Մայիսի 24-ին Կ. Պոլսոյ մէջ, կը հաստատուի Բ. Դրան կողմէ 1863 թ. Մարտի 17-ին «Հայոց Ազգային Կանոնագրութիւն» (Նիզամնամէ-ի միլլէթ-ի էրմէնիեան) անունով, ժողովուրդին մէջ կ'արթնցնէ հաւաքական գիտակցութիւն, ազգը կը ձերբազատէ մեծամեծներու կամայական տնօրէնութիւնէն եւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքը կը ձանջնայ որպէս «ազգի ղեկավար» եւ միջնորդ պետութեան եւ Հայ ժողովուրդի միջեւ: Ազգային Սահմանդրութիւնը, կը ջնջուի կառավարութեան կողմէ 19 Յուլիս 1332 (1916) թ. կանոնագրով, իսկ Մոնտրոսի Դաշնագրէն վերջ 18 Նոյեմբեր 1334(1918) թ. հրապարակուող կանոնագրութեամբ կրկին ոյժի մէջ կ'ըլլայ մինչեւ 1934:

- Հանրապետութեան հիմնադրմամբ Օսմանեան կայսրութեան «բազմազգ համակարգը» իր տեղը կը թողու «ազգ-պետութեան»: Զէնալապետութեան

¹⁰³ Ազատեան Թ., Գօջունեան Ս., Արմաղան, Թուրքիոյ Հանրապետութեան 15 ամեակին առթիւ, էջ 32:

հիմնական ծրագիրը կ'ըլլայ կազմել «միատարր եւ միաձուլ Թուրքիա»: Հանրապետութեան առաջին տարիներէն սկսեալ երկրի ամբողջ բաղկացուցիչ տարրերը թրքացնելու համար, կը մշակուի ու կը գործադրուի «թրքացման քաղաքականութիւն», որն կը հետապնդուի մեթոտիկ կերպով եւ յատկանշական է ոչ-իսլամ փոքրամասնութեանց նկատմամբ իր խտրական որոշումներով:

- Զէնալական Հանրապետութիւնը իրականացնելու համար իր «Ազգ-պետութիւն» կառուցելու նպատակը, կը գործադրէ փոքրամասնութեանց ձուլման եւ թրքացման, գաղթի ու զետեղման, ինչպէս նաեւ տնտեսութիւնը ազգայնացնելու քաղաքականութիւն:

Թուրքիոյ Հանրապետութեան շրջանին կը հրատարակուին նախամտածուած երեք օրէնքներ, որոնցմէ առաջինը կ'արգիլէ արտասահման մեկնող հայերուն վերադարձը, երկրորդը կը ջնջէ որոշ ժամանակ Թուրքիոյ չգտնուողներուն քաղաքացիական իրաւունքները, իսկ երրորդը կ'ապաստեփականացնէ քաղաքացի չեղողներուն ինչքերը:

2 Յուլիս 1924 թուակիր Երթելեկի օրէնքին համաձայն Հայոց կ'արգիլուի վերադառնալ իրենց ծննդավայրը: Թուրքիոյ 24 Ապրիլ 1924 թուակիր Նոր Սահմանադրութեամբ, չեն կրնար վերադառնալ Թուրքիա եւ իրենց թրքահպատակութիւնը կը կորսնցնեն բոլոր այն Հայերը, որոնք տարագրուած կամ փախած են Թուրքիայէն: Իսկ լքեալ զոյքերու մասին իրարայայջորդ կերպով հրատարակուող օրէնք, հրահանգ ու շրջաբերականներով կ'ապաստեփականացնէ անոնց ունեցուածքը:

- Հայոց Լքեալ Գոյքերուն մէկ մասը հրատարակուած օրէնք եւ հրահանգներով տեղացի թուրք, քիւրտ եւ չէրքէզ առաջատար անձանց կողմէ կը թալանուի, մէկ մասը Պալքաններէն եկող գաղթականներուն կը տրամադրուի, մէկ մասը իսլամ-թուրք դրամատէրեր ստեղծելու համար ծրիաբար կամ չնչին գումարներու փոխարէն իսլամ անհատ կամ հաստատութիւններու կը տրուի:

- Թուրքիոյ Հանրապետական վարչաձեւը, իր հաստատումէն սկսեալ կրթական օրէնքներով եւ հրահանգներով իր միջամտութիւնը հետզհետէ աւելի կ'ընդարձակէ բոլոր ոչ-իսլամ վարժարաններէն ներս, որն կը յառաջացնէ կնճռոտ կացութիւն եւ պատճառ կ'ըլլայ վարչական ու տնտեսական տագնապներու, որոնց ծանր հետեւանքն է, որ այսօր Ստամպուլահայ համայնքը կ'ապրի մայրենի լեզուի գործածութեան ինչպէս նաեւ ազգային վարժարաններու աշակերտական թիւի յարաճուն նուազման նեղութիւնը, որն մտահոգութիւն կը պատճառէ համայնքի ապագային նկատմամբ:

- 1929 թուականին սկսող աշխարհատարած տնտեսական տագնապը որուն պատճառը կ'ըլլայ ճարտարարուեստական եւ երկրագործական սպառումի նուազումը, կը շարունակուի մինչեւ 30-ական թուականներու վերջերը: Տագնապի ազդեցութիւնը հետզհետէ աւելի զգալի կ'ըլլայ համայնքային կեանքէն ներս, պատճառ կ'ըլլայ ազգային հաստատութիւններու հատյթներուն նուազման: Բոլոր ազգային հաստատութիւններու ելմտական կացութիւնը կը խանգարուի եւ կ'ունենան պիտձի յարաճուն բաց:

- Կառավարութիւնը 1933 թ. Յունիսին փոքրամասնութեանց ներքին գործերը վարելու համար օրինագիծ մը կը պատրաստէ, որն աւելի կը կրճատէ այն իրաւասութիւնները, գոր կը վայելէին ոչ-իսլամ փոքրամասնութիւնները: Այս օրինագծին համաձայն հիւանդանոցներ ու դպրոցներ կը կառավարուին «բարեսի-

րական ընկերությանց օրէնք»ին համաձայն պատկանեալ մարմիններու ձեռքով, կը ջնջուին Ազգային եւ Քաղաքական ժողովները, Ուսումնական եւ Թաղական խորհուրդները, դպրոցական Հոգաբարձութիւնները եւ Պատրիարքներն ու Խախամապետն ալ կը դառնան պարզապէս հոգեւոր հովիւներ:

- 14 Յունիս 1934 թ. եւ 2510 համար «Գաղթականներու եւ Ապաստանեալներու Ձեռնդման Օրէնք»ի նպատակներէն մէկը կ'ըլլայ՝ զուգէ ուշացումով, իրաւական գետնի վրայ յենարան մը գտնել Հայերուն Միջին Անատոլոյէն դրկուելուն, մէկը կ'ըլլայ Թուրքիոյ մէջ «ազգային» հիմքերու վրայ հաստատում մը իրականացնել, իսկ մէկն ալ կ'ըլլայ պատերազմի հաւանականութեան դէմ ռազմագիտական կարեւորութիւն ունեցող շրջաններու մէջ ապրող փոքրամասնութիւնները փոխադրել ուրիշ տեղեր:

- 2762 թիւ Վագֆներու օրէնքով ոչ-իսլամ փոքրամասնութեանց բոլոր հաստատութիւններուն տնօրինումը կը տրուի Վագֆներու Ընդհանուր Տնօրէնութեան, այսինքն Պետութիւնը կը միջամտէ այս հաստատութեանց ներքին գործերուն, հակառակ որ այս մէկը բոլորովին խոտոր կը հանդիսանայ Լօզանի Դաշնագրի 40 յօդուածին: 1936-ին բոլոր միւթէվէլիներէն եւ մատակարար մարմիններէն կը պահանջուի ներկայացնել՝ ազգային հաստատութիւններու անշարժ գոյքերու ցուցակը պարունակող յայտարարագիր: 1936-ի յայտարարագրերը, երկար տարիներ ետք պատճառ կը հանդիսանան ազգային աւելի քան երեսուն անշարժ գոյքերու կորուստին: Սոյն թուականէն վերջ գնելով, ժառանգութեամբ, նուիրատուութեամբ կամ կտակով ձեռք բերուած բոլոր ինչքերը կ'առնուին իրենց ձեռքէն:

- 3512 թիւ «Հաւաքականութեանց (Ընկերակցութեանց) Օրէնքը», որ կը սկսի գործադրուիլ 1939 Յուլիսին, չարտօնէր կրօնական հանգամանք ունեցող ոչ մէկ ընկերակցութեան գոյութիւնը: Կը փակուին եկեղեցիներու մատակարարութեան համար հիմնուած կազմակերպութիւնները: Խորասանձեանի ատենապետած Վարչական ժողովը մտավախութեամբ, 15 Յուլիս 1939-ին «լուծեալ» կը հռչակէ ինքզինքը:

- Հանրապետութեան 1923-1939 թթ. քաղաքական, տնտեսական ու մշակութային վերոյիջեալ իրադարձութիւններու ծանր ազդեցութիւնը զգալի է նաեւ Ստամպուլահայ համայնքի ներկայ վիճակին վրայ:

Ատենախօսութեան հիմնական դրոյթները ներկայացուած են հեղինակին հետեւեալ հրապարակումներուն մէջ.

1.- Պոլսահայ կրթական կեանքը Թուրքիոյ Հանրապետութեան 20-30-ական թուականներուն (մամուլի գնահատմամբ), ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտութիւնների, Երեւան, 2007, թիւ 3, էջ 140-152:

2.- Բանկալթի Ազգային Գերեզմանատունը (Ս. Յակոբ Գերեզմանատունը), ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտութիւնների, Երեւան, 2008, թիւ 1, էջ 87-95:

3.- Ազգային Փոքրամասնութիւնները Թուրքիոյ Հանրապետութեան 1923-1939 թուականներուն, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտութիւնների, Երեւան, 2009, թիւ 3, էջ 74-86 (մաս I): 2010, թիւ 1-2, էջ 68-80 (մաս II):

4.- Կ. Պոլսոյ Ազգային Խնամատարութիւնը, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 2010, թիւ 1-12, Յունուար-Դեկտեմբեր, էջ 423-434:

АРМЯНСКАЯ ОБЩИНА СТАМБУЛА
(1923-1939 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 8 июля 2011 г. в 14⁰⁰ ч. по адресу: г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4 на заседании специализированного совета 004 при Институте истории НАН РА.

РЕЗЮМЕ

В связи с основанием Турецкой Республики “многонациональная система” Османской империи уступила место системе “нация-государство”. Основной задачей кемалистского государства было образование “однородной и монолитной Турции”. С первых же дней провозглашения Республики проводилась в жизнь “политика отуречивания”, отличавшаяся своими дискриминационными положениями в отношении немусульманских нацменьшинств.

В период Турецкой Республики были приняты 3 закона: первый из них налагал запрет на возвращение уехавших из страны армян, второй лишал гражданских прав тех, кто на какое-то время покидал Турцию, а третий приватизировал имущество всех тех, кто оказались “не гражданами”.

Согласно “Закону о перемещении” от 2 июля 1924 г., армянам запрещалось возвращаться на родину. В соответствии с новой Конституцией от 24 апреля 1924 г. права возвращения и турецкого подданства лишались все те армяне, которые эмигрировали или бежали из Турции. А по принятым один за другим законам, инструкциям и циркулярам они лишались прав на оставленное имущество.

Часть оставленного армянами имущества, в соответствии с законом и инструкциями, была разграблена местными турками, курдами и черкесами, часть была предоставлена беженцам с Балкан, часть же бесплатно либо по ничтожным ценам передавалась отдельным лицам или организациям с целью формирования класса турецких капиталистов.

Административный аппарат Турецкой Республики своими образовательными законами и инструкциями все активней вторгался в деятельность немусульманских учебных заведений, что привело к их административному и экономическому кризису.

Для управления внутренними делами нацменьшинств в июне 1933 г. правительство подготовило законопроект, согласно которому больницы и

школы в соответствии с “Законом о благотворительных организациях” курировались соответствующими органами, упразднялись национальные и городские собрания, учебные и участковые советы, а школьные попечители, патриархи и главный раввин становились всего лишь духовными пастырями.

“Закон о размещении беженцев и переселенцев” от 14 июня 1934 г. преследовал цель на правовой основе выдворить армян из ряда вилайетов Турции. Помимо этого, согласно данному закону, заселение территорий должно было осуществляться на “национальной” основе. В то же время закон предусматривал переселение нацменьшинств из стратегически важных районов в иные вилайеты в связи с надвигающейся войной.

В соответствии с законом о вакуфах № 2762 руководство всеми учреждениями немусульманских нацменьшинств передавалось под общее управление вакуфов, то есть государство вмешивалось во внутренние дела данных учреждений, что шло вразрез со статьей 40 Лозаннского договора. В 1936 г. от всех попечителей и органов снабжения были затребованы декларации о недвижимом имуществе национальных учреждений, ставшие причиной утраты более 30 объектов национального недвижимого имущества. К концу данного года все купленное, унаследованное или полученное в дар имущество было отнято у владельцев.

“Закон о сообществах” № 3512, вступивший в силу в июле 1939 г., налагал запрет на существование сообществ, имеющих конфессиональный характер. 13 июля 1939 г. административный совет под председательством Хорасанджяна принял решение о самоликвидации.

Тяжелые последствия вышеназванных политических, экономических и культурных событий, имевших место в Турецкой Республике в 1923-1939 гг., сказываются и на нынешнем положении армянской общины Стамбула.

THE ARMENIAN COMMUNITY OF ISTANBUL
(1923–1939)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of
“History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on 8 July 2011, 14⁰⁰ in the
Specialized Council 004 by the Institute of History of the Academy of Sciences of
RA (Yerevan, Marshal Baghramian Ave. 24/4)

SUMMARY

The Armenian Patriarchate of Constantinople was established in 1461 at the initiative of Fatih S. Mehmed. The first and most important purpose of the Patriarchate was to serve as a center for unification of the Armenian communities spread in the Asia Minor. In the times of the Ottoman Empire, with state support and protection, the Patriarchs of Constantinople could carry out governance in their inner indirect circles, including both the common people and the clergymen.

The National Constitution adopted on May 24th, 1860 in Constantinople was ratified by Bab-ı Ali on March 27, 1863. The document was entitled “The Armenian National Constitution.” It awoke the collective consciousness in the Armenian people, liberating them from the arbitrary administration of the high-ranked officials. According to the Armenian National Constitution, the Armenian Patriarch of Constantinople was recognized as “the leader of the nation” and the mediator between the common Armenian people and the state. The National Constitution was abolished by the July 19 decree in 1916, while on November 18, 1918 it again came in force by the Montrose Treaty and functioned till 1934.

Having established as a republic, the multiethnic system of the Ottoman Empire yielded its positions to “the national state.” The main aim of the Kemalist ideology was to shape a “monoethnic and united Turkey.” The new government elaborated and carried out the new “policy of turkification/assimilation with Turks” directed to all of the ethnical communities since the very first years of the republic’s foundation. This policy was implemented by means of discriminative decisions carried out against the non-Islamic minorities of the country.

In order to attain its goal of building a “nation-state,” the Kemalist Republic carries out the policy of assimilation with Turks, colonizing and

deportation as well as taking measures to make the economy of the country national.

In the first period of the existence of the Republic of Turkey, three laws were adopted. Thus, the first one forbade the Armenians travelling abroad to return to the country, the second law abolished the civil rights of the Armenians who stayed out of Turkey for some period of time, while, according to the third law the state officials could confiscate the property of those who were no longer Turkish citizens.

By July 2 1924 law on traveling, the Armenians were refused the right to return to their birthplace in Turkey. According to the New Turkish Constitution of April 24, 1924 all the Armenians who were deported or left Turkey, lost their Turkish citizenship and were banned to return to the country. Their property was confiscated by the state according to the laws and instructions that followed this one.

Following the above-mentioned laws and instructions, the local Turks, Kurds and Circassians robbed the part of the Armenian's abandoned property, while the other part was given to refugees from the Balkans, the rest was given to the Islamist-Turkish individuals and institutions for free or a law cost in order to create capitalists.

Since the day of its foundation, the regime of the Turkish Republic was increasing its influence and interference in the management of the non-Islamic educational institutions by adopting a number of educational laws and decrees. This approach caused quite a complicated situation and resulted in administrative and economic emergencies. Thus, as a result of that policy, today, the usage of the Armenian language and the number of the pupils at the national schools constantly decrease in the Armenian community of Istanbul. This situation arouses concerns about the future of the community.

The world economic crisis that began in 1929 and was the result of decrease in industrial and agricultural production lasted till the end of 30-ies. This crisis caused the decrease of the national institution's profits. All of the national institutions had budget deficit.

In June of 1933, according to the governmental draft law elaborated for the management of the inner issues of the minorities, the hospitals and schools were managed by the law "On Benevolent Unions." All kind of national and political councils, educational and district councils, the boards of trustees of the schools were abolished, as well as the Patriarchs and Spiritual leader of Jews turn into mere spiritual leaders, being stripped of their other responsibilities.

In 14 June 1934, by adopting the law N 2510 and the law "On Accommodation of Immigrants and Refugees," the Turkish Government made perhaps belated attempt to create legal grounds for sending the Armenians to Middle Anatolia. The first law was to contribute to the formation of national basis, while the other one was mean to deport the national minorities from the regions of key strategic importance to other regions, if the probability of a war was high.

By the Vakif Law N 2762, the General Administration of Vakifs was granted the solemn right to manage all the institutions belonging to the non-Islamic communities, which meant that the state officials interfere with the inner regulations of these institutions, which was an obvious violation of article N 40 of the Lausanne treaty. In 1936, all the distributors were required to submit detailed declarations of their real estate. The declarations submitted in 1936 resulted in the loss of over 30 real estate properties belonging to the national institutions. The owners lost all kind of property that they bought, donated or inherited that year.

The law N 3512 on "Companionship" came in force in the July of 1939 and banned any institution of religious character. The companies supplying the churches were closed too. On July 15, 1939, The Administrative Council led by Khorasantchyan declared itself liquidated.

The abovementioned developments that took place from 1923 to 1939 in the Turkish Republic still have their negative impact on the current state of the Armenian community of Istanbul.

